



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանական դպրոց**) կառավարման խորհուրդը (**այսուհետ՝ խորհուրդ**)՝ մասնակցությամբ Խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, անդամներ՝ Լյուդվիկ Դավթյանի, Նիկոլայ Հակոբյանի, Լեոնիկ Հովհաննիսյանի և Տիգրան Խուրշուդյանի,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 45.4-րդ հոդվածի և ՀՀ փաստաբանական դպրոցի խորհրդի 17.11.2021թ. թիվ 7/6-Լ որոշմամբ հաստատված ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԱՐՁԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ (**այսուհետ՝ Կարգ**) 6-րդ կետով,

միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Սահմանել ՀՀ փաստաբանական դպրոցում ուսուցում անցնող ունկնդիրների համար ուսման վարձի զեղչերի հետևյալ դեպքերը՝

1.1 Արցախյան երկրորդ (քառասունչորսօրյա) պատերազմին մասնակցած ունկնդիրներին ՀՀ փաստաբանական դպրոցի փնօրենի կողմից կարող է փոխվել մինչև 25 (քսանհինգ) տոկոսի չափով ուսման վարձի զեղչ:

1.2. Արցախյան երկրորդ (քառասունչորսօրյա) պատերազմի արդյունքում զիջված (կորցրած) փարածքներում բնակելի տուն կամ բնակարան կորցրած ընտանիքի անդամ հանդիսացող ունկնդիրին (եթե ունկնդիրը բնակվել է այդ տանը կամ բնակարանում) ՀՀ փաստաբանական դպրոցի փնօրենի կողմից կարող է փոխվել մինչև 30 (երեսուն) տոկոսի չափով ուսման վարձի զեղչ:

1.3 Արցախյան երկրորդ (քառասունչորսօրյա) պատերազմի ընթացքում ընտանիքի անդամ (հայր, մայր, ամուսին, եղբայր, քույր, զավակ) կորցրած ունկնդիրներին ՀՀ փաստաբանական դպրոցի փնօրենի կողմից

29 օգոստոսի 2022թ.

թիվ 10/2-Լ

կարող է փրվել մինչև 40 (քառասուն) փոկոսի չափով ուսման վարձի գեղչ.

1.4 Գիտակրթական կամ ուսումնամեթոդական մրցույթներում հաղթող ճանաչված ունկնդիրներին՝ ՀՀ փաստաբանական դպրոցի փնօրենի տրամադրած հավաստագրի հիման վրա՝ մինչև ուսման վարձի 25 փոկոսի չափով:

2. Այն դեպքում, երբ ունկնդիրը կարող է Կարգի 5-րդ և 6-րդ կետերում նշված երկու կամ ավելի հիմքերով օգտվել ուսման վարձի գեղչերից, ապա ունկնդրին տրվում է միայն մեկ հիմքի համար նախատեսված առավել բարձր չափի գեղչը՝ առավելագույնի սահմանում:

ՀՀ փաստաբանական դպրոցի
կառավարման խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

29 օգոստոսի 2022թ.

թիվ 10/2-Լ

ք. Երևան